

մաշեցին եւ գերացուցին, ընդ որոց մեր Ա [1] քահանայ [1] եւ Ա [1] սարկաւագ սպանաւ, Բ [2] քահանայ եւ Բ [2] սարկաւագ հետ ԳՃԼԷ [337] ուղղափառ քրիստոնէիք գերի անկաւ, որ մինն էր Տէր Մաթա-տէն, որ առաքեցաք ձեր հրամանուց ոտն կարգաւ պատմել ձեզ: Յե-դեւ որ օսմանլուն յեղ փախաւ, շահն արեկ բազում հեծելօք մեր եր-կիրն՝ թէ գնայ Էրեվան, յեղ առնու օսմանլուէն: Ես գնացի մօտ շահն թէ հասկացընեմ մեր ամենայն նեղութիւնն. գտա [1] մօտ շահն պատրի Զվան դէ Լուկա<sup>6</sup>, որ Լէհաց հաթմանն, որ է Կօնէց Պօլսկին թագաւո-րին բերանովն մօտ շահ Սէֆին դեսպան: Զիս էառ տարաւ մօտ շահն, երբ շահն զիս տեսաւ, լսէց մեր նեղութիւնն հետ ինձ ասաց՝ Քո բանն եւ խնդիրքդ կու կատարեմ. ապա ի կամս այն, որ զքեզ կու առաքեմ մօտ Լէհաց թագաւորն դեսպան: Ես ասացի՝ Եղիցին կամք քո: Վասն այս բանիս համար Ա [1] հուրմ արեւտ իմ վիքարին մեր վանքերն չի նեղացուցեն մինչեւ իմ յեղ գնալն, խոստացաւ երբ բերդն առնում՝ ինչ գերի որ միջումն որ քո [1] է՝ յամէն պարգելօք յեղ դարձընիմ պարգե-ւօք ձեզ ի լաւ հո [վ] վութիւն տամ. ճշմարիտ գերիքն որ յառաջ պարտ-քով գնեցի նոքա որ շահն բերդն էառ ազատ արէց՝ ԿԶ գերի հետ Բ [2] սարկաւագի տարել ին օսմանլուի երկիրն եւ այլն պատրի Մաթա-տէն կու պատմէ ձեր հրամանուց: Մեզի շահն խալաթէց, ձի արեւտ, ճանապարհի խարջ արեւտ, Մօսքովո [1] վերա [1] առաքէց դէպի Լէհ: Յերբ հասանք Մօսքովա [1] թագաւորին հողն Հանի Թարխան քա-ղաքն՝ մեզի հօն Ը [8] ամիս պահեցին, յեղեւ շահէն նոր չափար եկաւ

<sup>6</sup> 1634 թ. Լեհաստանի հեթման Ստանիսլաւ Կոնցեպուսկին Ղրիմում դոմի-նիկեանների միսիա մեկնող Զիովաննի Զուլիանի դէ Լուկային դարձնում է իր անձնական դեսպանորդը Պարսից շահի մօտ: Դէ Լուկան եւ Օգոս-տինոս Բաշենցը, ամենայն հաւանականութեամբ, հանդիպել են 1635 թ. դեկտեմբերի վերջին կամ 1636 թ. յունուարի սկզբին թուրքական սուլթան Մուրադի Դ-ի դէմ կազմաւորուած Երեւանի ռազմական ճամբարում: Գո-րիից ժամանած դէ Լուկան այստեղից ուղեւորում էր Թարիզ: Այս հան-դիպման մանրամասները տե՛ս A. Eszer. Giovanni Giuliani da Lucca O. P. - Forschungen zu seinem Leben und seinem Schriften, - AFP, 1967, 37, SS. 353-468, 412-418.